Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 27

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<12>> դեկտեմբերի 2022թ. ք. Երևան

2022 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի անդամ Ռ. Այվազյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 4 հայտերի քննարկում:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության լիցենզիա տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

3. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԼԻԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 17-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և դեկտեմբերի 5-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 17-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց 90բ հասցեում:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Տ. Գասպարյանի և Ա. Ստեփանյանի կողմից՝ արտադրական տարածքում: Ուսումնասիրության ժամանակ հայտնաբերված թերությունների շտկման մասին նյութերը Կազմակերպության կողմից ներկայացվել են 2022 թվականի դեկտեմբերի 5-ին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԼԻԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԱՋ ՀՈՒՆԱՆ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 8-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 8-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, գյուղ Ծովակ, 1-ին փողոց 15/2 հասցեում:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՋ ՀՈՒՆԱՆ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԴԱՎԻԹ ՄՀԵՐԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 11-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 2-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո 22.11.2022թ. ԱՍ/25.1/31461-2022 գրությամբ հայտատուին տեղեկացվել է լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա են թերության վերաբերյալ, մասնավորապես առ այն, որ բացակայում է Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրում կամ գազաբալոնների պարբերական վկայագրում

իրականացնելու համար նախատեսված արտադրական բազայի սեփականության կամ օգտագործման իրավունքի ձեռքբերումը հաստատող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ԱՁ Դավիթ Մհերի Ղազարյանի անվամբ վկայականի պատճենը: Առկա են միայն վարձակալության պայմանագիր և «ՖՐԻՎԵՅ ԷՔՍՊՐԵՍ» հայ-ամերիկյան ՀՁ ՓՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վկայականը, բացակայում են բանվորական անձնակազմի մասնագիտական որակավորման փաստաթղթերի պատճենները և օգտագործվող չափման միջոցների ստուգաչափման վկայականները:

Կազմակերպությունը չի ներկայացրել նոր նյութեր և չի վերացրել հայտին կից փաստաթղթերում առկա թերությունը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԴԱՎԻԹ ՄՀԵՐԻ ՂԱԶԱՐՅԱՆ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի և 2021 թվականի ապրիլի 15-ի 600-Ն որոշման պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.4 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԺԻՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 23-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման ԳԲ N 00046 լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 23-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման ԳԲ N 00046 լիցենզիայի նոր ներդիր տրամադրելու հայտ՝ գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության տեսակի համար:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից իրականացվել է ՀՀ, ք. Երևան, Արարատյան փողոց 99 հասցեում գտնվող արտադրական բազայի ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կազմակերպության սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար գազաբալոնների պարբերական վկայագրման համար ներկայացված տարածքում առկա չէ ճնշարկային տեղամաս, իսկ ճնշարկային տեղակայանք օդի մատակարարումը իրականացվում է գազաբալոնների տեղադրման համար նախատեսված տարածքից և անցնում է անհատ ձեռնարկատիրոջը չպատկանող տարածքներով և շինություններով:

Հաշվի առնելով, որ Կազմակերպության կողմից գազաբալոնների պարբերական վկայագրման համար ներկայացված տարածքը ըստ իր տեղադիրքի չի հանդիսանում ԳԲ N 00046 լիցենզիայի գազաբալոնների տեղադրման տեղամասի մաս, ուստի չի դիտարկվում որպես որպես միասնական գործունեության վայր, ուստի նոր ներկայացված՝ գազաբալոնների պարբերական վկայագրման տեղամասը անհրաժեշտ է կահավորել առանձին ճնշարկային տեղամասով:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՋ ԺԻՐԱՅՐ ՂԱՋԱՐՅԱՆ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

2.1 Քննարկվեց՝

<<ՋԻ ԳԱՐԱԺ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 22-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և դեկտեմբերի 1-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 22-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին: 2022 թվականի դեկտեմբերի 1-ին Կազմակերպությունը ներկայացրել է նոր նյութեր՝ տեխնիկական զննության ժամանակ օգտագործվող արատորոշման միջոցներից գազաանալիզատորի, ծխաչափի և գազի արտահոսքի ստուգման սարքի տեխնիկական պարամետրերը պարունակող տեխանձնագրերը և ստուգաչափման վկայականները՝ վերացնելով հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՋԻ ԳԱՐԱԺ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.2 Քննարկվեց՝

<<ԼՅՈՒՔՍ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 17-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 17-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 23.11.2022թ. ԱՍ/25.1/31500-2022 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես առ այն, որ բացակայում է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հայտը՝ համաձայն N 1 ձևի, իսկ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16112022-11-0031 վկայականով ներկայացված՝ տեխնիկական զննության համար նախատեսված տարածքում առկա է 233.1 քմ ծածկ, մինչդեռ կից ներկայացված շինությունների հատակագծում գծագրված է 12.10 մետր լայնությամբ և 18.30 մետր երկարությամբ, 226.23 քմ տարածքով շինություն, որի վերաբերյալ տեղեկությունը N 16112022-11-0031 վկայականում բացակայում է:

Կազմակերպությունը չի ներկայացրել նոր նյութեր կամ պարզաբանում, չի վերացրել ԱՍ/25.1/31500-2022 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԼՅՈՒՔՍ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. <<ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու

համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00006 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00006 լիցենզիան և 0001 և 0002 ներդիրներն ուժը կորցրած կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց <<ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00006 լիցենզիան և 0001 և 0002 ներդիրներն ուժը կորցրած կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան